ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

2002 ԹՎԱԿԱՆԻ ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ընդունվել է 28.12.2001

Հոդված 1. Հաստատել 2002 թվականի առողջապահական պետական նպատակային ծրագրերը (հավելվածը կցվում է):

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման պահից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ՝ Ռ. ՔՈՉԱՐՅԱՆ

10 հունվարի 2002թ.
ՀՕ-291

2002 ԹՎԱԿԱՆԻ ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ
Ծ Ր Ա Գ Ր Ե Ր Ը

- Բնակչության հիգիենիկ եւ համաճարակային անվտանգության ապահովման 2001 թվականի պետական նպատակային ծրագիր
- Բնակչության առողջության առաջնային պահպանման 2001 թվականի պետական նպատակային ծրագիր
- Մոր եւ մանկան առողջության պահպանման 2001 թվականի պետական նպատակային ծրագիր
- Բնակչության սոցիալապես անապահով եվ առանձին (հատուկ) խմբերում ընդգրկված անձանց բժշկական օգնության 2001 թվականի պետական նպատակային ծրագիր
- Սոցիալական հատուկ նշանակություն ունեցող հիվանդությունների դեմ պայքարի 2001 թվականի պետական նպատակային ծրագիր
- Համաշխարային բանկի տրամադրած միջոցներով իրականացվող առողջապահության ֆինանսավորման մեխանիզմների բարելավման եւ առողջության առաջնային պահպանման զարգացման 2001 թվականի պետական նպատակային ծրագիր

Առողջապահական պետական նպատակային ծրագրերն ամենամյա ծրագրեր են, որոնք նպատակաուղղված են բնակչության առողջության պահպանմանը, եւ որոնց ֆինանսավորումն արտացոլված է յուրաքանչյուր տարվա Հայաստանի Հանրապետության պետական բյուջեում: 2002 թվականի առողջապահական պետական նպատակային ծրագրերն ընդգրկում են բնակչությանը տրամադրվող պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնությունն ու սպասարկումը: Դրանք ֆինանսավորվում են 2002 թվականի Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից:

2002 թվականի առողջապահական պետական նպատակային ծրագրերն են՝

բնակչության հիգիենիկ եւ համաճարակային անվտանգության ապահովման պետական նպատակային ծրագիրը.

բնակչության առողջության առաջնային պահպանման պետական նպատակային ծրագիրը.

մոր եւ մանկան առողջության պահպանման պետական նպատակային ծրագիրը.

բնակչության սոցիալապես անապահով եւ առանձին (հատուկ) խմբերում ընդգրկված անձանց բժշկական օգնության պետական նպատակային ծրագիրը.

սոցիալական հատուկ նշանակություն ունեցող հիվանդությունների դեմ պայքարի պետական նպատակային ծրագիրը.

Համաշխարհային բանկի տրամադրած միջոցներով իրականացվող առողջապա-հության ֆինանսավորման մեխանիզմների բարելավման եւ առողջության առաջնային պահպանման զարգացման ծրագիրը:

ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՀԻԳԻԵՆԻԿ ԵՎ ՀԱՄԱՃԱՐԱԿԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ 2002 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԾՐԱԳԻՐԸ

Ծրագրի նպատակն է 2002 թվականին ապահովել՝

- Հայաստանի Հանրապետության տարածքում հիգիենիկ եւ հակահամաճարակային պետական հսկողության միջոցառումների իրականացումը.

- ինֆեկցիոն հիվանդությունների ու թունավորումների կանխարգելման նպատակով հիգիենիկ եւ հակահամաճարակային միջոցառումների կազմակերպումը.

- բնակչության առողջության վրա շրջակա միջավայրի գործոնների ազդեցության սոցիալ-հիգիենիկ ուսումնասիրությունների կազմակերպումը.

- բնակչության հիգիենիկ եւ հակահամաճարակային անվտանգության ապահովման կազմակերպական-մեթոդական կանոնակարգումը.

- հիգիենիկ-համաճարակաբանական նորմերի եւ կանոնների պատշաճ համակարգի ստեղծումը.

- բնակչության հիգիենիկ եւ բժշկական գիտելիքների մակարդակի բարձրացումը:

Ծրագրի՝ Հայաստանի Հանրապետության 2002 թվականի պետական բյուջեի միջոցներից ֆինանսավորվող միջոցառումները ներառում են՝

1. նախազգուշական եւ ընթացիկ սանիտարական հսկողության գծով՝

ա) կառուցվող եւ վերակառուցվող օբյեկտների, բնակավայրերի հատակագծման եւ կառուցապատման, արդյունաբերական արտադրանքի, ներդրվող նոր տեխնոլոգիաների, սննդամթերքի եւ պարենային հումքի արտադրության բնագավառում սննդի նոր հավելումների եւ հատուկ կենսաբանական ակտիվ նյութերի ներմուծման նկատմամբ նախազգուշական հսկողության իրականացումը,

բ) գործող օբյեկտների, խմելու ջրի, ջրամատակարարման եւ ջրահեռացման ցանցերի, մթնոլորտային օդը, հողը աղտոտող աղբյուրների, անբարենպաստ ֆիզիկական գործոնների, արտադրական հումքի եւ սննդամթերքի փոխաքննության, ինչպես նաեւ փակ շինությունների օդային միջավայրի եւ աշխատանքային գոտու օդի, մարդու վրա շրջակա միջավայրի ֆիզիկական գործոնների ազդեցության ու այլ գործոնների նկատմամբ ընթացիկ սանիտարական հսկողության իրականացումը.

2. համաճարակաբանական հսկողության գծով՝

ա) ինֆեկցիոն եւ զանգվածային ոչ ինֆեկցիոն հիվանդությունների կանխարգելման միջոցառումների իրականացումը,

բ) հատուկ վտանգավոր վարակիչ հիվանդությունների դեմ պայքարի եւ կանխարգելման միջոցառումների իրականացումը.

3. համաճարակաբանական հատուկ ծրագրերի գծով՝

ա) մալարիայի դեմ պայքարի եւ կանխարգելման միջոցառումների իրականացումը,

բ) մարդու իմունային անբավարարության վիրուսից առաջացած հիվանդության կանխարգելման միջոցառումների իրականացումը.

4. հիգիենիկ եւ համաճարակաբանական նորմերի եւ կանոնների համակարգի կատարելագործման գծով հիգիենիկ եւ հակահամաճարակային ծառայության նորմատիվ-տեխնիկական փաստաթղթերի հիմնական բազայի մշակման ապահովումը (ներառյալ՝ ԱՊՀ անդամ-պետությունների միասնական համակարգի ընդունումը՝ կիրառելով սանիտարական նորմեր եւ կանոններ, համաճարակային հսկողության ստանդարտներ եւ ցուցումներ).

5. բնակչության կանխարգելիչ պատվաստումների գծով՝

ա) պոլիոմիելիտի վերջնական վերացումը. դիֆթերիայի, կապույտ հազի, փայտացման, կարմրուկի, էպիդեմիկ պարոտիտի, տուբերկուլյոզի, հեպատիտ «Բ»-ի, այլ հիվանդությունների դեմ կանխարգելիչ պատվաստումների հետ կապված նախապատրաստական աշխատանքների կազմակերպումը եւ հսկողության իրականացումը,

բ) համաճարակային ցուցումներով զանգվածային պատվաստումների արշավների անցկացման կազմակերպումը եւ հսկողության ապահովումը:

Ծրագրի իրականացման նպատակով 2002 թվականի ընթացքում նախատեսվում է՝

ա) ապահովել համակարգի կառուցվածքի եւ կազմակերպահիրավական ձեւերի հստակեցում,

բ) մշակել «Հայաստանի Հանրապետության բնակչության սանիտարահամա-ճարակային անվտանգության ապահովման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքից բխող համապատասխան փաստաթղթերի փաթեթ,

գ) ստեղծել հակահամաճարակային կետեր եւ ջոկատներ (ծառայություններ)՝ Հայաստանի Հանրապետության պետական սահմանի համաճարակային եւ հիգիենիկ անվտանգությունն ապահովելու նպատակով.

6. բնակչության հիգիենիկ եւ բժշկական գիտելիքների մակարդակի բարձրացման գծով՝

- բնակչության շրջանում առողջ ապրելակերպի վերաբերյալ քարոզչության, հիվանդությունների կանխարգելմանն ուղղված ուսուցման եւ հիգիենիկ գիտելիքների տարածման աշխատանքների իրականացումը:

ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԱՌԱՋՆԱՅԻՆ ՊԱՀՊԱՆՄԱՆ 2002 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԾՐԱԳԻՐԸ

Ծրագրի նպատակն է 2002 թվականին ապահովել՝

- առաջնային բժշկական օգնություն իրականացնող ամբուլատոր-պոլիկլինիկական օղակի դերի բարձրացումը, կանխարգելիչ ուղղվածության ուժեղացումը, բժշկական օգնություն ստանալու մատչելիության ընդլայնումը, ամբուլատոր-պոլիկլինիկական բուժօգնության տեսակների եւ դրանց տեսակարար կշռի մեծացման ապահովումը, ամբուլատոր-պոլիկլինիկական ծառայության օպտիմալացումը, նյութատեխնիկական բազայի ամրապնդումը, հիվանդանոցային բուժօգնության բեռի թեթեւացումը.

- ամբուլատոր-պոլիկլինիկական օղակում աշխատող բուժանձնակազմի հմտության ու գործունեության որակի բարձրացումը՝ առավել ուշադրություն դարձնելով գյուղական ամբուլատորիաների աշխատողներին.

- սոցիալական հատուկ նշանակություն ունեցող հիվանդությունների կանխարգելումն ու բուժումն ամբուլատոր-պոլիկլինիկական մասնագիտացված դիսպանսերային բուժհաստատություններում՝ ուռուցքաբանական, հակատուբերկուլյոզային, հոգենյարդաբանական, նարկոլոգիական, էնդոկրինոլոգիական, մաշկավեներաբանական կենտրոններում, դիսպանսերներում, բուժմիավորումների դիսպանսերային բաժանմունքներում:

Ծրագրի՝ Հայաստանի Հանրապետության 2002 թվականի պետական բյուջեից ֆինանսավորվող միջոցառումներն են՝

1. բնակչության առողջության պահպանման, հիվանդությունների կանխարգելման, հիվանդների ախտորոշման, բուժման եւ նրանց նկատմամբ շարունակական հսկողության ապահովման, անհրաժեշտության դեպքում, հիվանդանոցային բուժման կարիք ունեցողների հոսպիտալացման կազմակերպման միջոցառումների իրականացումը տեղամասային թերապեւտների, տեղամասային մանկաբույժների, ընտանեկան բժիշկների կողմից՝ ամբողջ բնակչության համար, առանց հաճախումների սահմանափակման.

2. առողջ ապրելակերպի վերաբերյալ բնակչության գիտելիքների բարձրացման միջոցառումների կազմակերպումը տեղամասային թերապեւտների, տեղամասային մանկաբույժների, ընտանեկան բժիշկների կողմից՝ ամբողջ բնակչության համար.

3. բոլոր ամբուլատոր-պոլիկլինիկական հաստատություններում, անկախ սեփա-կանության ձեւից, համապատասխան դեպքերում հիվանդների անհետաձգելի առաջին բժշկական օգնության ապահովումը՝ ամբողջ բնակչության համար.

4. ամբուլատոր-պոլիկլինիկական օղակի նեղ մասնագետների կողմից բնակչության բուժական-խորհրդատվական մասնագիտացված օգնության ապահովումը՝ ուռուցքաբանական, հոգեբուժական/նարկոլոգիական, մաշկավեներաբանական, հակատուբերկուլյոզային, ինֆեկցիոն կաբինետների միջոցով՝ ամբողջ բնակչության համար, առանց հաճախումների սահմանափակման.

5. բնակչության սոցիալապես անապահով խավերի եւ մինչեւ 7 տարեկան երեխաների ամբուլատոր-պոլիկլինիկական բժշկական օգնության կազմակերպումը բոլոր մասնագետների կողմից, առանց հաճախումների սահմանափակման, իսկ անհրաժեշտության դեպքում, առանց լաբորատոր-գործիքային ախտորոշիչ հետազոտությունների սահմանափակման.

6. տեղամասային թերապեւտների, տեղամասային մանկաբույժների, ընտանեկան բժիշկների, իսկ առանձին հիվանդությունների գծով համապատասխան մասնագետների միջոցով բնակչությանն անվճար եւ արտոնյալ պայմաններով դեղերով ապահովումը՝ համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 1999 թվականի հունիսի 8-ի «Անվճար կամ արտոնյալ պայմաններով դեղեր ձեռք բերելու իրավունք ունեցող բնակչության սոցիալական խմբերի եւ հիվանդությունների ցանկերը հաստատելու մասին» թիվ 396 որոշման.

7. գյուղական բնակավայրերում բուժակ-մանկաբարձական կետերի միջոցով բնակչության մինչբժշկական օգնության եւ սպասարկման իրականացումը.

8. հղիների եւ գինեկոլոգիական հիվանդություններով տառապող կանանց մանկա-բարձագինեկոլոգիական օգնության ապահովումը՝ կանանց կոնսուլտացիաների (կաբինետների) միջոցով՝ համաձայն մոր եւ մանկան առողջության պահպանման 2002 թվականի պետական նպատակային ծրագրի.

9. ամբուլատոր-պոլիկլինիկական օղակում բժշկական օգնություն ստացող հիվանդների համար, բժշկական հիմնավորված ցուցումների առկայության դեպքում՝ հատուկ եւ դժվարամատչելի ախտորոշիչ հետազոտությունների անցկացման ապահովումը մասնագիտացված բուժհաստատություններում:

ՄՈՐ ԵՎ ՄԱՆԿԱՆ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՄԱՆ 2002 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԾՐԱԳԻՐԸ

Ծրագրի նպատակն է 2002 թվականին ապահովել՝

- երեխաների բժշկական օգնության կազմակերպման անհրաժեշտ ծավալներն ու մատչելիությունը, ինչպես նաեւ հիվանդությունների կանխարգելման միջոցառումների իրականացումը՝ ուղղված մանկական մահացության եւ հիվանդացության ցուցանիշների նվազեցմանը.

- մայրության հովանավորումը, ծննդօգնության եւ ընտանիքի պլանավորման ծառայությունների մատչելիությունը՝ ուղղված մայրական եւ շուրջծննդյան (պերինատալ) հիվանդացության ու մահացության ցուցանիշների նվազեցմանը, ինչպես նաեւ կանանց վերարտադրողական առողջության բարելավմանը:

Ծրագրի՝ Հայաստանի Հանրապետության 2002 թվականի պետական բյուջեից ֆինանսավորվող միջոցառումներն են՝

Ա. երեխաների բժշկական օգնության ուղղությամբ՝

ամբուլատոր-պոլիկլինիկական բուժօգնության գծով՝

ա) տեղամասային մանկաբույժների, ընտանեկան բժիշկների կողմից մինչեւ 15 տարեկան երեխաների ամբուլատոր-պոլիկլինիկական հետեւյալ բժշկական օգնության իրականացումը՝

- առողջ երեխայի հսկողություն՝ աճի զարգացման գնահատմամբ,

- հիվանդությունների կանխարգելման միջոցառումներ, ներառյալ՝ պատվաստումների իրականացումը,

- հիվանդությունների վաղ հայտնաբերում եւ հիվանդ երեխայի բժշկական օգնություն, ներառյալ՝ մինչեւ 7 տարեկան եւ հաշմանդամ (մինչեւ 15 տարեկան) երեխաների տնային կանչերի ապահովումը,

- քրոնիկ հիվանդություններով տառապող երեխաների շարունակական հսկողությունը,

- ծնողների հետ տարվող առողջապահական կրթման եւ քարոզչական աշխատանք՝ երեխայի խնամքի, սնուցման եւ հիվանդությունների կանխարգելման վերաբերյալ գիտելիքների մակարդակը բարձրացնելու նպատակով.

բ) մինչեւ 7 տարեկան եւ բնակչության սոցիալապես անապահով եւ առանձին (հատուկ) խմբերում ընդգրկված մինչեւ 15 տարեկան երեխաների նեղ մասնագիտացված խորհրդատվական եւ դիսպանսերային օգնության ապահովումը, լաբորատոր-գործիքային ախտորոշիչ հետազոտությունների իրականացումը ամբուլատոր-պոլիկլինիկական եւ հիվանդանոցային մասնագիտացված բուժհաստատությունների (կենտրոնների, դիսպան-սերների, գիտահետազոտական ինստիտուտների, հիվանդանոցների) կոնսուլտատիվ պոլիկլինիկաների (կաբինետների) կողմից, ինչպես առողջ երեխայի հսկողության ընթացքում, այնպես էլ հիվանդությունների առկայության դեպքում.

գ) մինչեւ 7 տարեկան եւ բնակչության սոցիալապես անապահով եւ առանձին (հատուկ) խմբերում ընդգրկված երեխաների (անկախ տարիքից) ստոմատոլոգիական օգնության կազմակերպումը.

դ) ամբուլատոր-պոլիկլինիկական օղակում բոլոր մասնագետների կողմից երեխաների անհետաձգելի բժշկական օգնության ապահովումը՝ անկախ տարիքից եւ սոցիալական կարգավիճակից.

ե) բուժքույրերի կողմից դպրոցներում երեխաների բժշկական օգնության եւ սպասարկման ապահովումը՝ տարածքային պոլիկլինիկայի հսկողության եւ ղեկավարության ներքո.

հիվանդանոցային բուժօգնության գծով՝

ա) մինչեւ 7 տարեկան երեխաների հիվանդանոցային բժշկական օգնության իրականացումը՝ անկախ երեխայի հիվանդության ախտորոշումից եւ սոցիալական կարգավիճակից.

բ) սոցիալական հատուկ նշանակություն ունեցող առանձին հիվանդություններով (հոգեկան խանգարումներ, չարորակ նորագոյացություններ, ինֆեկցիոն հիվանդություններ, այդ թվում՝ տուբերկուլյոզ եւ այլն) տառապող երեխաների հիվանդանոցային բժշկական օգնության ապահովումը՝ անկախ երեխայի տարիքից եւ սոցիալական կարգավիճակից.

գ) 7-ից մինչեւ 15 տարեկան երեխաների հիվանդանոցային բժշկական օգնություն պահանջող անհետաձգելի վիճակների (որոնց ցանկը հաստատում է Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարությունը) բուժօգնության ապահովումը հիվանդանոցային բուժհաստատություններում.

դ) բնակչության սոցիալապես անապահով եւ առանձին (հատուկ) խմբերում ընդգրկված երեխաների հիվանդանոցային բժշկական օգնության ապահովումը՝ անկախ երեխայի տարիքից եւ հիվանդության ախտորոշումից.

ե) բնակչության սոցիալապես անապահով եւ առանձին (հատուկ) խմբերում ընդգրկված եւ մինչեւ 7 տարեկան երեխաների վերականգնողական բուժումը համապատասխան կենտրոններում.

3. այլ մասնագիտացված բուժօգնության գծով՝ հաշմանդամ երեխաների օրթեզավորում եւ պրոթեզավորում՝ համապատասխան մասնագիտացված կազմակերպու-թյունների միջոցով.

Բ. մանկաբարձագինեկոլոգիական օգնության ուղղությամբ՝

1. ամբուլատոր-պոլիկլինիկական բուժօգնության գծով՝

ա) մանկաբարձ-գինեկոլոգի, ընտանեկան բժշկի եւ մանկաբարձուհու կողմից հղիության եւ հետծննդյան շրջանի հսկողության իրականացումը.

բ) մանկաբարձ-գինեկոլոգի եւ նեղ մասնագետների կողմից հղիության ախտաբանության վաղ հայտնաբերման եւ բուժման ապահովումը.